

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

11.04.2024

ք. Ծաղկաձոր

Սույն թվականի ապրիլի 11-ին, ժամը 11.00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. 20-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (առաջին փուլ) ք.Ծաղկաձոր համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ «4Ա կապիտալ» ՍՊԸ կողմից, Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք Սարալանջի փողոց 52 հողամաս հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Ելույթ ունեցան՝

Բացման խոսքով հանդես եկավ Ծաղկաձորի համայնքի ղեկավար Ն.Հրությունյանը:

Նախագծի ճարտարապետը մանրամասն ներկայացրեց նախատեսվող գործունեությունը, դրա տեխնիկատնտեսական ցուցանիշները և լուծումները: Նշվեց որ շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսված են կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ:

Ա.Մինասյան հայտում համաձայն օրենքի կներկայացվեն տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, ինչպես նաև համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնք ուղղված են մեղմելու, նվազեցնելու և կանխարգելելու հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա:

Հանրային լսման մասնակիցների և կառուցապատողի ներկայացուցիչների միջև ծավալվեց քննարկում կառուցապատման ցուցանիշների, կոմունիկացիաների իրականացման, կառույցի պատշգամբների, հանրային տարածքների, ավտոկայանատեղերի և այլ հարցերի շուրջ, որոնց ճարտարապետի և բնապահպան մասնագետի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Ծաղկաձորի քաղաքապետը հավանություն հայտնելով նախատեսվող գործունեության վերաբերյալ, նշեց որ իրենց կողմից կարևորվում են բնապահպանական խնդիրները և գործունեությունը պետք է իրականացվի բնապահպանական նորմերի պահպանմամբ:

Դիտողություններ և առաջարկություններ

Չկան

Հանրային լսումների արդյունքում մասնակիցները որոշեցին՝

Հավանություն տալ նախատեսվող գործունեությանը:

Վարող և քննարկումների պատասխանատու – Ն.Հրությունյան



«4Ա կապիտալ» ՍՊԸ ներկայացուցիչ Է. Քալաշյան

